15.05.2018թ.

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ-ՈՒՂԵՐՁԸ ԸՆՏԱՆԻՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Այսօր Ընտանիքի միջազգային օրն է, որը Հայաստանում նշվում է արդեն 8-րդ տարին:
Հարգելի համաքաղաքացիներ
Ընտանիքը համամարդկային արժեքների կրողն ու պահպանողն է, լավագույն ավանդույթների փոխանցողը, մեր պետականության հիմքը:
Մեր համայնքում ապրող ընտանիքներն էլ սյուներն են մեր երկրի կայացման և ամրապնդման, նրանց միջոցով և նրանց շնորհիվ է, որ մեր հասարակության մեջ պահպանվում է համերաշխության և փոխըմբռնման մթնոլորտը:
Համայնքային համերաշխությունն էլ ձևավորվում է ընտանիքներում տիրող մթնոլորտով. որքան ամուր և համերաշխ են մեր ընտանիքները, այնքան ներդաշնակ է այն միջավայրը, որտեղ ապրում ենք մենք:
Ես գիտեմ՝ շատ ընտանիքներում դժվարությունների ու խնդիրների պակաս չկա, սակայն սիրո և փոխըմբռնման շնորհիվ հաղթահարվում են նաև դրանք, և այդ ճանապարհին տեղական իշխանությունն էլ կանգնած է յուրաքանչյուր ընտանիքի կողքին՝ պատրաստ այսուհետ էլ աջակցելու նրանց:
Հատկապես կարևորում եմ բազմազավակ և բազմանդամ ընտանիքների դերը մեր համայնքի կյանքում: Այդպիսի ընտանիքները ճիշտ դաստիարակության, փոխհարաբերությունների, համերաշխության, խոչընդոտները դիմակայելու լավագույն օրինակներ են:
Բարձր գնահատելով ընտանիքի դերը հասարակության մեջ՝ ցանկանում եմ, որ մեր համայնքում շատանան ամուսնությունները, որ ընտանիքներում իշխեն սերն ու համերաշխությունը, որ երեխաները մեծանան լիարժեք ընտանիքներում:
Ընտանիքի օրը ևս մեկ ազդակ է՝ գնահատելու մեր ունեցածը, արժևորելու այս օղակի դերը և նպաստելու ընտանիքների ամրության պահպանմանը:
Սիրելի համաքաղաքացիներ
Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս այս հիանալի տոնի առթիվ: Ընտանիքի օր պետք է լինի յուրաքանչյուր օրը, որի առանցքում այն պահելու, պահպանելու, ամրապնդելու գաղափարներն են:
Ցանկանում եմ, որ մեր ընտանիքներում թևածեն սերն ու խաղաղությունը, որ ընտանիքի անդամները լինեն միմյանց նկատմամբ ուշադիր և հոգատար, որ մեր ընտանիքներում ապրող մարդիկ լինեն առողջ, երջանիկ, որ ավանդական արժեքները չկորցնեն իրենց արդիականությունը, և մեր համայնքում բազմապատկվի ընտանիքների թիվը:
Թող Աստված պահապան լինի բոլոր ընտանիքներին: